Տեղեկատվական թերթիկ

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office
South Caucasus

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալության Հարավային Կովկասի գրասենյակ

Նոյեմբեր 2016թ.

Հայաստանում անասնապահական ծառայությունների տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն

Տվյալներ

Երկիրը. Հայաստան, Սյունիքի մարզ

Տևողությունը. Հունվար 2013թ. – հուլիս 2016թ.

Բյուջե. 1‘417‘520 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերները.

- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
- Սյունիքի մարզպետարան

Իրականացնող գործընկեր.

- Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (UNFAO)
- Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ

Ծրագրի նպատակ

Ծրագրի գերագույն նպատակն է հզորացնել Սյունիքի մարզում անասնապահական ծառայությունները՝ նպաստելով Հայաստանում սննդի անվտանգության համակարգի բարելավմանը և կայուն գյուղատնտեսական զարգացմանը:

Հիմնավորում

Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի մոտ 35%-ը ստացվում է անասնապահության ոլորտից, որտեղ մեծ տեղ են զբաղեցնում խոշոր և մանր եղջերավորները, և որը գործում է անասնապահության ավանդական համակարգերի համաձայն. սակավաթիվ կենդանի յուրաքանչյուր հոտում և կենդանիների տարբեր տեսակների սերտ հարաբերություն: Այս հանգամանքը ծայրահեղ դժվարացնում է կենդանիների հիվանդությունների վերահսկողությունը: Կենդանիների հիվանդությունների արդյունավետ կառավարումը կարևոր է սննդի անվտանգության տեսանկյունից. շատ հիվանդություններ կարող են հեշտությամբ տարածվել և հասնել համաճարակային մասշտաբների, իսկ դրանց վերահսկողությունը/կառավարումը պահանջում է տարբեր երկրների միջև համագործակցություն:

Կրկնվող հիվանդությունները, ինչպիսիք են բրուցելոզը, պալարախտը, անթրաքսը և կատաղախտը, ինչպես նաև կենդանիների անդրսահմանային հիվանդությունները, ինչպիսիք են աֆրիկյան խոզի ժանտախտը կամ պճեղախտը, լուրջ խնդիրներ են առաջացնում Հայաստանի տնտեսության համար:

Շատ համաճարակային հիվանդություններ կարող են վտանգել տնտեսության տվյալ հատվածի զարգացումը և կենդանիների կամ մսի արտահանումը: Բրուցելոզը միայն կարող է Հայաստանի տնտեսությանը պատճառել մեծածավալ վնաս: Ուղղակի կորուստները կազմում են տարեկան մոտ 10 միլիոն ԱՄՆ դոլար՝ վարակված կենդանիների մահացության կամ սպանդի հետևանքով: Անուղղակի կորուստները կազմում են տարեկան առնվազն 20 միլիոն ԱՄՆ դոլար, ներառյալ այլ տնտեսական կորուստներ, ինչպիսիք են օրինակ՝ նվազ արդյունավետությունը և բացթողնված առևտրային հնարավորությունները: Հանրային առողջապահության տեսանկյունից, բրուցելոզը և պալարախտը գլխավորում են կենդանիների հիվանդությունների ցանկը, ինչպես նաև վնասում են մարդու առողջությանը:

Ծրագրի գործողությունները

Ծրագրային միջամտության իրականացումը բաժանված է երկու մասի՝ երկու իրականացնող գործընկերների՝ ՌԶԳ ՀԿ-ի և FAO-ի, միջև:
ՌԶԳ ՀԿ-ն պատասխանատու է համայնքապետարանների ներգրավվածության և կարողությունների զարգացման, անասնապահական ծառայությունների հզորացման, թիրախային համայնքներում իրազեկության մակարդակի բարձրացման, ինչպես նաև պիլոտային պատվաստումների քարոզարշավի ընթացքում աջակցության համար:

FAO-ն ներգրավված է այնպիսի քաղաքական և գիտական հարցերում, որոնք պահանջում են հիվանդությունների կանխարգելմանը, համաճարակաբանությանը, բարձր մակարդակի վերապատրաստմանը, լաբորատոր փորձաքննությանն առնչվող փորձագիտություն, գիտելիք և փորձ, ինչպես նաև բրուցելոզի վերահսկողության երկարաժամկետ ռազմավարության մշակման գործում կառավարությանը աջակցություն ցուցաբերելու մեջ, և այլն: Այն ժամանակ, երբ ծրագիրը կապացուցի պատվաստումների մոտեցման արդյունավետությունը,

կառավարությունը կդիտարկի ծրագրի ընդլայնումը մինչև ազգային մակարդակ և համապատասխան ռազմավարության մշակումը:

Ակնկալվող արդյունքներ

Ծրագրի իրականացման այս փուլի ավարտին ակնկալվող արդյունքներն են.

- Սոցիալական մակարդակում ծրագրի ազդեցությունը ավելացված եկամուտն է (անասնապահության ոլորտում) և գյուղական բնակչության շրջանում հանրային առողջապահության բարելավված մակարդակը բրուցելոզի վերացման միջոցով (վարակված մարդիկ): Ծրագիրն իրականացվում է Սյունիքի մարզի բոլոր 100 գյուղերում, որտեղ ընդհանուր բնակչության թիվը կազմում է 49'400, խոշոր եղջերավորների գլխաքանակը՝ 48’000 (որոնցից 24’000 կովեր են), իսկ մանր եղջերավորներինը՝ 75’000:

- Հայաստանի կառավարությունը հաստատել է Բրուցելոզի վերահսկողության ազգային ռազմավարությունը:

Կոնտակտային տվյալներ.

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալություն Հարավային Կովկասի գրասենյակ

Շվեյցարիայի դեսպանատուն

Մելիք Ադամյան փողոց 2/1
Երևան 0010, Հայաստան

Հեռախոս. +374 10 52 98 60
Ֆաքս. +374 10 52 98 61
www.swisscoop.am
www.facebook.com/SwissCooperationSouthCaucasus
yerevan@eda.admin.ch